և կուսակցական ակտիվին մար:

# ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՄԱՐԶԿՈՄՈՒՄ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐԻ ԼՂԻՄ ՍՈՎԵՏԻ ԳՈՐԾԿՈՄՈՒՄ

Ադրբեջանի կոմկուսի Լեռնային Ղարաբաղի մարզկոմի բյուրոն և ժողովրդական դեպուտատների ԼՂԻՄ սովետի գործկոմը քննարկեցին «1988 թվականի աշնանացան կուլտուրաների բերքահավաքի նախապատրաստման և կազմակերպված անցկացման լրացուցիչ միջոցառումների մասին» հարցը:

1988 թվականի հացահատիկի բերքահավաքը կազմակերպված անցկացնելու, պետության հացահատիկի փոնդի պլանի կատարումը ժամանակին ապահովելու, բերքահավաքի շրջանում ծագող հարցերը պրակտիկորեն լուծելու նպատակով որոշված է կազմակերպել մարզային շտաբ՝ մարզգործկոմի նախագահի տեղակալի պաշտոնակատար, ԼՂԻՄ ագրոարդի նախագահ Վ. Ս. Գրիգորյանի ղեկավարությամբ: Կուսակցության շրջկոմներին և շրջգործկոմներին երաշխավորվում է կազմակերպել համանման շրջանային շտաբներ:

ԼՂԻՄ ագրոարդյունաբերական կոմիտեին, կուսակցության շրջոմներին, շրջգործկոմներին հանձնարարված է ուժեղացնել առանց կորուստների հացահատիկայինների բերքահավաքը ժամանակին անցկացնելու, հացահատիկի պետվաճառքի պլանները և սոցիալիստական պարտավորությունները կատարելու սոցիալ-տնտեսական ու քաղաքական նշանակության հարցերի պարզաբանման ուղղությամբ մասսայական-քաղաքական աշխատանքը հացագործների շրջանում:

Պետք է գործը կազմակերպել այնպես, ասված է տվյալ հարցի առթիվ ընդունված որոշման մեջ, որ ժամանակին փոխադրվեն հացահատիկի բերքը և ծղոտը, առաջին հերթին ապահովվի սերմացուի ֆոնդը, այն հասցվի բարձր կոնդիցիայի, բերքահավաքից և դաշտերի մաքրումից անմիջապես հետո սեղմ ժամկետներում կատարվի հերկը, որպեսզի յուրաքանչյուր տնտեսություն, ավարտելով իր աշխատանքները, պարտադիր կարգով օգնություն ցույց տա հարևաններին՝ բերքահավաքի և դաշտերի հերկման գործում:

Կուսակցության մարզկոմի բյուրոն և մարզսովետի գործկոմը պարտավորեցրին Ադրբեջանի կոմկուսի Ստեփանակերտի քաղկոմին և քաղգործկոմին, շրջանային կազմակերպությունների համաձայնությամբ, ապահովել հացահատիկայինների բերքահավաքի շրջանում շեֆական օգնության կարգով արդյունաբերական ձեռնարկությունների և կազմակերպությունների բեռնատար ավտոմեքենաների ուղարկումը մարզի շրջաններ, դրանց տեխնիկական բարձր պատրաստությունը և ավտոտրանսպորտային միջոցները բարձր որակավորման վարորդներով կոմպլեկտավորումը: Կուսակցության շրջկոմներին, ժողովրդական դեպուտատների շրջանային սովետներին հանձնարարված է շրջաններ ուղարկվող ավտովարորդների համար ապահովել բարձրարտադրողական աշխատանքի և հանգստի պատշաճ պայմաններ, հասնել ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական հստակ սպասարկման:

Հանձնարարված է մարզարհմխորհրդին, Ադրբեջանի ԷԿԽՄ մարզկոմին, ԼՂԻՄ ագրոարդյունաբերական կոմիտեին, կուսակցության շրջկոմներին սոցիալիստական լայն մրցություն ծավալել հացագործների շրջանում, ամեն օր ամփոփել մրցության արդյունքները, նախանշել և իրագործել սոցիալիստական մրցության հացթող-բերքահավաք-տրանսպորտային համալիրների աշխատողների բարոյական և նյութական խրախուսման միջոցառումներ:

Կուսակցության Լեռնային Ղարաբաղի մարզկոմի բյուրոն և ժողովրդական դեպուտատների ԼՂԻՄ սովետի գործկոմը հաստատ վստահություն հայտնեցին, որ մարզի կուսակցական, սովետական, տնտեսական մարմինները, ագրոարդյունաբերական համալիրի աշխատավորները պատշաճ հոգատարությամբ կվերաբերվեն առաջնակարգ կարևորության խնդրին՝ հացահատիկի արտադրության ավելացմանը, որն ունի ոչ միայն սոցիալ-տնտեսական, այլև քաղաքական նշանակություն: Նրանք հնարավոր ամեն ինչ կանեն բերքահավաքի կամպանիայի կազմակերպված անցկացման և գալիք տարվա բարձր բերքի ամուր հիմքերը դնելու համար: